

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 28.07.2021թ. թիվ 2113093736 որոշումն անփոփոխ թողնելու, իսկ 28.07.2021թ. թիվ 2113093740 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին

<< 30 >> 08 2021թ. 7-13 13190

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Շուշաննա Թորոսյանի ՄԴ/71511-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սայաթ-Նովա փողոցի 3 շենքի 6 բնակարանի բնակիչ Շուշաննա Թորոսյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113093736 և 2113093740 որոշումներից որևէ մեկը նշելով, որ միևնույն իրավախախտման համար կրկնակի որոշում է ստացել:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի խնդրանքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի **251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները**:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման համաձայն **3.1՝ <<Մուտքն արգելվում է>> ճանապարհային նշանն** արգելում է տրանսպորտային միջոցների մուտքը տվյալ ուղղությամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113093736 և 2113093740 որոշումների իրավախախտումների PIN անհատական ծածկագրերի տակ գետեղված տեսանյութերի դրվագային ուսումնասիրություններն ակնհայտ են դարձնում այն փաստը, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 06.07.2021թ. ժամը՝ 15:28-ին Երևան քաղաքի Թամանյան - Իսահակյան փողոցների խաչմերուկի հատվածում՝ իրավախախտումն արձանագրված վայրում, խախտել է **3.1՝ «Մուտքն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը:**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

- ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.
- բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում.
- գ) շահերի բախման իրավիճակում:

Այսպիսով, ակնհայտ է, որ միևնույն արարքի համար անձը երկու անգամ է ենթարկվել վարչական պատասխանատվության թիվ 2113093736 և 2113093740 որոշումներով, ուստի ճանապարհային ոստիկանության կողմից կայացված վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113093740 որոշումը ենթակա է բեկանման, քանի որ այն տեխնիկական վրիպակի արդյունք է:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 28.07.2021թ. թիվ 2113093740 որոշումը բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 28.07.2021թ. թիվ 2113093736 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ դրան վերաբերող մասով, առանց բավարարման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Շուշաննա Թորոսյանին:



Ե. Կարապետյան